

Առ Տ. Նուիրակի ի Սպանիա .

(Prop. Lettere volgari, an. 1623—1624,  
vol. 3, f. 130—131.)

Նկատի առնելով այն պատճառները, զորոնք մեր Տէրը<sup>5</sup> իւր հրամանագրին մէջ — որուն պատճենը ներփակ պիտի գտնէք — տուած ի Ս. Ժողովին Տարածման Հաւատոյ վասն իրաց կաթողիկէ Եկեղեցւոյն Հայաստանի, որոչեց Նորին Սրբութիւնը Գոայի մէջ հայ մանուկներու կրթութեան համար Դպրոց մը բանալ. որպէս զի կարենան անոնք պահել եւ պահպանել այն եկեղեցին եւ նաեւ օգնել, որպէս զի սրբունին այն մերձակայ վայրերը, որոնք վարակուած են արեւելեան հերձուածէն եւ հերետիկոսութենէն: Միւս այլ վայրերէ աւելի այս քաղաքը յարմար գտաւ, որովհետեւ հայ վաճառականները Արեւմտեան Հնդկաստանի հետ անդադար տուրեւառ ունենալով, շատ աւելի զիւրին պիտի ըլլայ հայ մանկտին այս Դպրատունը բերել քան հոս ի Հոռոմ, որ թէ հեռու է եւ թէ չունի այն ազգին հետ որ եւ է վաճառականական կապ, թէեւ կայ հոս օթեւան մը դոյզն ինչ կերպով հիւրասիրելու համար այն հայերը, որոնք երբեմն երբեմն կու գան սուրբ տեղերը այցելելու համար:

Այս գործին հոգը յանձնուած է Միրայի Գեր. Արքեպիսկոպոսին, որ Նորին Երանութենէն ընտրուած է մէկ եւ միւս Հայաստանի արքեպիսկոպոսին առընթերակայ ասպազայ

<sup>5</sup> Ուրբանոս Ը., 1623—1644: